

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Շնորհազարդ եղբայր,

Այսու վերստին կպայծառանան մեր հոգիները բոլոր և մեր կյանքի ուղին, զի «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Արարչագործ ու փրկարար այս մեծ ավետիսը թող նոր լույս իջեցնե մեր եկեղեցիին և անոր սպասավորներուն վրա և զորացնե զՄեզ բոլորս, որպեսզի սիրով միաբան կարողանանք բազմարդյուն դարձնել մեր ձեռաց գործերը, համրապնդում հոգևոր կյանքի և ազգային միասնության մեր ժողովուրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Սուրբ Հարության շնորհներով թող ամուր հաստատվին արդարությունը և խաղաղությունը մարդկային աշխարհին մեջ և թող ամին մանավանդ սերն ու միության ոգին մեր ազգի զավակներուն կյանքեն ներս, մեր սուրբ եկեղեցվո կամարներուն ներքև:

Հավերժական սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն ընդունեցեք շնորհավորանք, եղբայրական ողջույն և աստվածային օրհնություն՝ Ձերդ Սրբության, Ձեր հավատավոր միաբանության և համայն հավատացյալ մեր ժողովուրդին:

Մնամք միշտ աղոթող առ Աստված հարցն մերոց՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալության (Լիսաբոն), Արգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*
* *

Վեհափառ և սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Աշխարհի Փրկչին Հիսուսի Քրիստոսի Հրաշափառ Հարության ս. տոնին առթիվ կփութանք Ձերդ Սրբության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Մեր սրտի խորերեն ջերմեռանդ կաղոթենք, որ ամենաբարին Աստված անփորձ և անխռով պահե ու պահպանե Հայաստանյայց ս. եկեղեցին, նվիրապետական ս. Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը ի խնամս մարդասիրության յուրո, և Ձեզի պարգևե մշտատև առողջություն և երջանկալից երկար կյանք:

«Ձեզ և Մեզ մեծ աւետիք.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

Անթիլիաս

*
* *

Մեր Տիրոջ Հարության երջանիկ տոնի առթիվ Ձերդ Սրբության ներկայացնում ենք Մեր, միաբանության և մեր համայնքի անունից ամենաանկեղծ շնորհավորանքները, ցանկանալով Ձերդ Սրբության քաջառողջություն, երջանկություն և հաջողություն:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

Երուսաղեմ

*
* *

Վեհափառ Տեր,

Մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի հրաշափառ տոնին առիթով կուզանք շնորհավորել Ս. Օծությունդ մեր կողմե և հանուն մեր հոգևորական դասուն և հավատացյալ հոտին, մաղթելով Ձեզի երկար ու երջանիկ տարիներ, և աստվածային առաջնորդություն և իմաստություն Ձեր բոլոր ձեռնարկներուն և ծրագիրներուն:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Մատչիմք ի համբույր Օծելույդ ս. աջույն և մնամք միշտ խոնարհ աղոթակից Ձեզ՝

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

Ստամբուլ